ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՂՎԱՆԻՑ ԹԵՎԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԸ

Հայոց եկեղեցու պատմության վաղագույն շրջանից մեզ են հասել աղբյուրագիտական սակավ նյութեր ու շատ ավանդություններ: Եվ եթե այսօր այդ շրջանի մասին կան գիտական հստակ պատկերացումներ, ապա շնորհիվ մեր հետազոտողների քրտնաջան պրպտումների, որոնք աղբյուրագիտական սուղ նյութերից ու ավանդություններից հյուսել են ժամանակի արժանահավատ պատկերը: Սակայն, այսուհանդերձ, դեռևս կան հարցեր, որոնք դուրս են մնացել քննության ոլորտից, և նույնիսկ գիտական շրջանակներում նրանց մասին այսօր էլ տիրապետող է ո՛չ գիտական, մշուշոտ պատկերացումը: Այդօրինակ հարցերից է հայոց եկեղեցու Աղվանից թևի կազմավորումը:

Աղվանից կաթողիկոսության նվիրապետական ազդեցությունը տարածված է եղել բուն Աղվանքի և Ուտիք ու Արցախ նահանգների վրա: Բուն Աղվանքն ընդգրկում էր Կուրից մինչև Կովկասյան լեռնաշղթան և Ալազան գետից մինչև Կասպից ծովն ընկած երկրամասը: Իսկ Ուտիքն ու Արցախը հին Հայաստանի երկու նահանգներն էին, որոնք բռնում էին Կուրից մինչև Երասխը և այդ գետերի միախառնվելու վայրից մինչև Հնարակերտ ավանը (այժմյան Խրամի գետաբերանում): 428 թ. պարսկական բռնապետությունը վերացրեց Արշակունյաց թագավորական հարստությունը Հայաստանում և դարձյալ Արշակունյաց տոհմին պատկանող Մազքթաց թագավորությունը բուն Աղվանքում: Դրանից հետո էր ադեն, որ Ուտիք ու Արցախ նահանգներից և բուն Աղվանքից կազմվեց պարսկահպատակ մեկ մարզպանություն[1]: Այս մարզպանության տարածքը հետագայում վարչա-քաղաքական բազմաթիվ վերաձևումների ու փոփոխությունների է ենթարկվել: Սակայն բոլոր պարագաներում հիշյալ տարածքի քրիստոնյա ամբողջ բնակչությունը մնացել է մեկ հոգևոր նվիրապետության՝ Աղվանից կաթողիկոսության իշխանության ներքո, իսկ այս կաթողիկոսությունն էլ միշտ ենթակա է եղել Ամենայն Հայոց Հայրապետությանը:

Եթե մարզպանական և ետմարզպանական շրջանների քաղաքական ու եկեղեցական կյանքի դարձդարձումները հնարավոր է առնել պատմագիտական մի հյուսվածքի մեջ, քանի որ այդ շրջանների մասին խոսում են հայրենի արժանահավատ աղբյուրները, ապա նույնը չի կարելի ասել նախորդ շրջանի մասին՝ անմիջական աղբյուրների բացակայության պատճառով: Բավական է

[1] Այս առթիվ հանգամանորեն տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Հյուսիս-արևելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-տնտեսական վիճակի հարցի շուրջը. «Բանբեր Երևանի համալսարանի», 1975, № 2, էջ 149—164:

ասել, որ Աղվանից կաթողիկոսության շրջանակներում ընդգրկված տարածքի բնակչության քրիստոնեության դարձի հանգամանքների համար հետազոտողները միակ ու արժանահավատ աղբյուր են ընդունում «Աղվանից աշխարհի պատմություն»-ը, որը վերջնական խմբագրման է ենթարկվել Ժ դարում: Այս «Պատմության» տվյալներն են, որ շարադրվել են, ընդունվել կամ չեն ընդունվել մասնագիտական հետազոտություններում, հայոց եկեղեցու բազմադարյան պատմությանը նվիրված հին ու նոր երկերում:

Իսկ այդ տվյալները հետևյալներն են.

Ըստ ավանդության՝ Թադեոս առաքյալի Հայաստան քարոզության գալուց և այնտեղ նահատակվելուց հետո, նրա աշակերտներից մեկը՝ Եղիշե անունով, վերադառնում է Երուսաղեմ, այնտեղ, իբր «ի ձեռաց սրբոյն Յակոբայ, եղբօր Տեառն», ձեռնադրվում եպիսկոպոս՝ «վիճակ առեալ իւր զԱրևելս», ապա «ճանապարհ արարեալ յԵրուսաղէմէ ընդ Պարսս, մտանէ ի Մազքութս, խոյս տուեալ ի Հայաստանեայց, և սկիզբն առնէ քարոզութեան ի Չողայ... Անտի եկեալ յՈւտի գաւառ...» քարոզում է, հետո «եկեալ ի Գիս, կանգնեաց զեկեղեցի և մատոյց զանարիւն պատարագ: Եւ անտի անցեալ ընդ դաշտակն Զերգունի ի տեղի զոհարանի դիւցամոլ կռապաշտիցն՝ անդ էառ զնահատակութեան պսակն»:

Քարոզիչ-նահատակի մարմինը թաղվել է Հոմենք կոչվող վայրում[2]:

Այս բոլորը կատարվել է մեր թվականության առաջին դարում:

Այլուստ հայտնի չեն Գիս, Զերգուն, Հոմենք տեղանունները: Սակայն հենց նույն աղբյուրի վկայությամբ՝ գտնվում էին Ուտիք նահանգում[3]: Նկատի առնելով նաև նույն սկզբնաղբյուրի լրացուցիչ տեղեկությունն այն մասին, որ Եղիշեի նշխարները հետագայում գտնվել և անմիջապես էլ տեղավորվել են մոտակա Հուրեկ և Ներսմիրհի (հետագայի՝ Ջրվշտիկ) վանքերում, իսկ սրանք գտնվում են ժամանակակից Մարտակերտի շրջանի հյուսիս-արևելյան մասում (Հուրեկը կամ Հոռեկա վանքը՝ Թալիշ գյուղի թիկունքում[4], իսկ Ջրվշտիկը, որ հենց այդ նշխարների պատճառով կոչվում է նաև Եղիշե առաքյալի վանք՝ Թարթառի ձորում[5]), կարելի է համոզված ասել, որ հիշյալ տեղանունները վերաբերել են Թարթառի ձախափնյակին, մոտավորապես այժմյան Բարդայի շրջանի արևմտյան մասին և Միր-Բաշիրի շրջանին:

Ուրեմն, Հայաստան աշխարհի առաջին քարոզիչ Թադեոս առաքյալի աշակերտ Եղիշեն քրիստոնեություն է քարոզել բուն Աղվանքում և Ուտիքում ու նահատակվել Թարթառի ձախ ափին:

Այս տվյալները հաղորդում է միայն «Աղվանից աշխարհի պատմությունը», և նրան էլ կրկնում են մեր միջնադարյան հեղինակները: Այլ խոսքով՝ նշված տվյալներն ստուգել անհնար է, քանի որ դրանք ժխտող կամ առավել արժանահավատ տեղեկություններ հաղորդող աղբյուրներ չկան:

Անշուշտ չի կարելի սոսկ մի քարոզության ու նահատակության հիման վրա պնդել, թե սա արդեն երկրամասի քրիստոնեացման սկիզբն է եղել: Մանավանդ, երբ հայտնի է, որ բնակչությունը միանգամայն անհաղորդ է մնացել այս ամենին, և նույնիսկ Եղիշեի երեք աշակերտներից երկուսը վերստին հետևել են հեթանոսության[6]:

Հետաքրքիր է, որ Եղիշե քարոզչի մասին զրույցը երկրամասի եկեղեցական ամբողջ կյանքում միշտ էլ փորձաքարի նշանակություն է ունեցել: Աղվանից մարզպանության եկեղեցու հայրերը, իրենց առաջին քարոզչին ներկայացնելով իբրև Հայաստանի առաջին քարոզիչ Թադեոս առաքյալի աշակերտի և նրա գործը շարունակողի, ամեն կերպ ջանում էին իրենց կաթողիկոսությունը պահել Ամենայն Հայոց նվիրապետության ոլորտում: Բավական էր, սակայն, հերձվածողական մի փոքր խլրտում կամ կենտրոնախույս տրամադրությունների բոր-

---

[2] **Մովսէս Կաղանկատուացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 16—17:

[3] Հետազոտողները բազմիցս Գիս ավանը շփոթել են բուն Աղվանքի Քիշ անունով գյուղի հետ, որը գտնվում է Շաքի-Նուխիից հյուսիս: Շփոթել են նույնիսկ Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Գիշիի հետ, որը համեմատաբար նորաստեղծ գյուղ է: Այս թյուրիմացությունների մասին հանգամանորեն տե՛ս **Բ. Ուլուբաբյան,** Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ. «ԲԵՀ», 1971, № 1, էջ 176—177:

[4] Գլխովանք է կոչվում, քանի որ, ըստ ավանդության, այնտեղ է պահվել Եղիշե առաքյալի մասունք-գլուխը (**Կաղանկատուացի,** էջ 18):

[5] Վանքը գտնվում է Թարթառի մի ոլորանում բարձրացած ժայռի վրա: Մակար Բարխուտարյանցը հավանական էր համարում, որ վանքն իր Ջրվշտիկ անունն ստացած լինի գետի զմայլելի ջրվեժի ձայնից (**Մակար վարդապետ Բարխուտարյանց,** Արցախ, Բագու, 1895, էջ 234, ծան. 1):

[6] **Կաղանկատուացի,** էջ 17: Ուտիքում Եղիշեին ու նրա երեք աշակերտներին հետապնդում են «անօրէնք ոմանք»: «...Մի յաշակերտացն ընկալաւ ի նոցանէ զնահատակութեան վախճան, և երկուցն, թողեալ զերանելին Եղիշայ, գնացին զկնի խողխողիչ արանցն»:

բոքում, որպեսզի նույն այդ Եղիշե քարոզիչը դառնար դրոշակ՝ Աղվանից կաթողիկոսությունը նախագահ հայտարարելու և Աղվանքի եկեղեցին առավել հին ու ինքնուրույն հորջորջելու համար:

Այս առումով ուշագրավ է նաև մի այլ հանգամանք: Աղվանքի հոգևոր ու աշխարհիկ ղեկավարները միշտ որոնել-գտել են մայր հայրենիքին ու նրա հավատին առավել սերտորեն կապվելու նոր հանգույցներ ու միջոցներ: Վաչագան Բարեպաշտի օրերում այդպիսի դեր ունեին Եղիշեի, Գրիգոր Լուսավորչի թոռ ս. Գրիգորիսի մասունքների գյուտը և նրանց շուրջ ստեղծված հասարժողովրդական ոգևորությունն ու ոգեշունչ ծիսակատարությունները: Հետագայում այդպիսի նշանակություն էին ունեցել Մեսրոպ Մաշտոցի թաղած խաչի մասունքները և Եղիշե քարոզչի նշխարները, որոնք վառ էին պահում հայ ուղղափառ հավատքի կրակը և անխախտ՝ միասնությունը մայր հայրենիքի հոգևոր նվիրապետության հետ:

Այս ամենը վերաբերում է Աղվանից եկեղեցու նախապատմությանը:

Գալով քրիստոնեության տարածման և պետական կրոն ընդունելու ժամանակներին վերաբերող տվյալներին, պետք է ասենք, որ այստեղ ևս, ինչպես մեր միջնադարյան հեղինակների, այնպես էլ հետագայի հետազոտողների համար հիմնական ու անառարկելի աղբյուր է ծառայել «Աղվանից աշխարհի պատմությունը»: Ընդ որում, ոչ ոքի մտքով իսկ չի անցել, որ վերջնականապես Ժ դարում շարահարված այդ «Պատմության» տեղեկությունները առավել վաղ ժամանակների իրողությունների մասին ընդունելի կարող են դառնալ միայն վաղ ժամանակներում ստեղծված աղբյուրներով ստուգվելուց հետո, կամ գոնե համեմատվելով այն աղբյուրների հետ, որոնք վկայակոչվում են Ժ դարի մեր շարահարողի կողմից:

Այսպիսի քննություն ցայսօր չի կատարել ոչ ոք, նույնիսկ հայոց եկեղեցու կոթողային պատմության հեղինակ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը:

Համոզվելու համար, թե այս անքննադատ վերաբերմունքի պատճառով Աղվանից կաթողիկոսությանը ենթակա նահանգների քրիստոնեացման հանգամանքներն ինչպիսի աղավաղ պատկեր են ստացել, կանգ առնենք միայն մեկ փաստի վրա:

Մովսես Դասխուրանցու հավաստումով, հետագայի Աղվանից կաթողիկոսության ոլորտում, այսինքն բուն Աղվանքում և հայկական Ուտիք ու Արցախ մարզերում, քրիստոնեությունը հիմնավորապես տարածել է Ուռնայր արքան Աղվանից: Իբր թե երբ Մեծ Հայքը լուսավորվեց Տրդատ թագավորի ձեռքով, «ած ի հաւատս և զելս արեգականն[7]. որք սակաւ ինչ ծանուցեալ էին զծագումն փրկութեան ճշմարիտ արեգականն և կրկնակի ընդ ձեռն Ուռնայրի գերագոյն լուսաւորեցան: Եւ այսք ի միում ժամանակի եղեն հրաշք աստուածուստ... (Ուռնայրը) առնու և զվերստին ծնունդն ի սրբոյն Գրիգորէ Հայոց Լուսաւորչէ, գայ լուսազգեստեալ ի սուրբ Հոգւոյն՝ առաւել լուսաւորէ զԱղուանս, եւ կայ, մնայ որդի մշտնջենական լուսոյն և վախճանէ զմարդկային կեանս: Իսկ զկնի սորին մահուանն խնդրեցաւ յԱղուանից մանուկն Գրիգորիս ի կաթողիկոսութիւն իւրեանց, զի Ուռնայր արքայն մեր խնդրեաց ի սրբոյն Գրիգորէ նորին ձեռնադրութեամբն լինիլ եպիսկոպոս աշխարհին իւրոյ...»[8]:

Այսպես, ուրեմն. Ուռնայր արքան Աղվանից, Մեծ Հայքի թագավոր Տրդատի հետ միաժամանակ, մկրտվելով Գրիգոր Լուսավորչից, եկավ, վերստին քրիստոնեացրեց Աղվանից աշխարհը կամ Արևելքը: Իսկ նրա մահվանից հետո էլ Արևելքի համար խնդրեցին, որպեսզի կաթողիկոս ձեռնադրվի Լուսավորչի թոռ Գրիգորիսը, քանի որ դեռևս Ուռնայրն էր խնդրել Լուսավորչին՝ անձամբ ձեռնադրելու Արևելից երկրի եպիսկոպոսին:

Կարելի էր մտածել, թե խոսքը վերաբերում է միայն բուն Աղվանքին, քանի որ Ուռնայրն իսկապես թագավորել է այնտեղ: Սակայն հիշատակված է նաև Գրիգորիսը, որ եպիսկոպոսություն է արել Արցախում (Ամարասն էր նրա աթոռանիստը): Հետևապես հեղինակը նկատի ունի հետագայի կաթողիկոսության ոլորտի մեջ առնված ամբողջ տարածքը[9]:

Բայց օրինական հարց է առաջանում. Ժ դարի մեր շարահարողը որտեղի՞ց պիտի քաղած լինի այս տեղեկությունները: Ան-

---

[7] «Զելս արեգականն», այսինքն՝ արևելք: Պատմության մեջ «Արևելք» «Արևելից կողմանք», «Արեւելից կողմանք Աղուանից» կոչվում են Մեծ Հայքի հյուսիս-արևելյան նահանգներ Ուտիքն ու Արցախը միասին, երբեմն՝ ներառյալ նաև բուն Աղվանքը, հատկապես երբ նկատի է առնվում մարզպանության շրջանը:

[8] **Կաղանկատուացի**, էջ 21—22:

[9] Այս տեղեկություններին մինչև վերջ հավատում էր Մաղաքիա արքեպս. Օրմանյանը (տե՛ս «Ազգապատում», § 71): Նույն վերաբերմունքն ունեն նաև հետագայի ուսումնասիրողները՝ Ս. Տ. Երեմյանը (տե՛ս «Очерки истории СССР, III—IX вв.», М., 1958, էջ 323), Կ. Վ. Տրևերը («Очерки по истории и культуре Кавказской Албании», М.—Л., 1959, էջ 217 և հտգ.) ևլք:

կասկած՝ հին աղբյուրների՛ց: Հատկապես վերոհիշյալ տեղեկություններն ընդգրկող հատվածից առաջ նա հիշում է իրեն նպաստավորած քերթողահայր Մովսեսին, այսինքն Մովսես Խորենացուն[10]: Իսկ Մովսես Խորենացու ճանաչած Ուռնայր թագավորն Աղվանից հետագա ժամանակների գործիչ է, որը ոչ մի առնչություն չի ունեցել քրիստոնեության տարածման հետ և նույնիսկ Հայոց թագավորի բարեկամն էլ չէր: Պարսից արքունիքի հրահրմամբ նա կռվի էր եկել Պապ թագավորի դեմ և Ձիրավի հայտնի ճակատամարտում (371 կամ 372 թ. գարնանը) պարսկական զորքերի հետ միասին խայտառակ ջարդ կրեց: «Ընդ որս և զՈւռնայր Աղուանից արքայ, խոցոտեալ ի Մուշեղոյ որդւոյ Վասակայ Մամիկոնէի, հանին ի պատերազմէն»[11]:

371/2 թ. պատերազմի դաշտ դուրս գալու համար թագավոր Ուռնայրը պետք է բավական ջահել ու առույգ լիներ: Սակայն եթե նա դարի արշալույսին հավատանպաստ եռանդուն գործունեություն էր ծավալել, ապա ավելի քան 70 տարի անց, հավանաբար, զառամյալ ծերունի է եղել[12]:

Այս անհամաձայնությունը վերացնելու նպատակով Հր. Աճառյանն ընդունում էր, թե Դ դարում Աղվանքի վրա իշխել են Ուռնայր անվամբ երկու թագավորներ. «Ուռնայր Ա... Պարսից Շապուհ թագավորի քեռայրն էր. եկավ Հայաստան, քրիստոնյա դարձավ, մկրտվեց Լուսավորչից և քրիստոնեությունը տարածեց Աղվանքում», և «Ուռնայր Բ... Պարսից հետ միացած ճակատեց Հայոց Պապ (368—374 թթ.) թագավորի դեմ. գերի բռնվեց Մուշեղ Մամիկոնյանից, որ վեհանձնաբար ազատ արձակեց նրան»[13]:

Սակայն Մովսես Դասխուրանցին Աղվանից երկու Ուռնայր թագավոր չգիտի: «Պատմության» բոլոր ձեռագրերում ու տպագիրներում նրա ներկայացրած Աղվանից թագավորների ցանկն ունի միայն մեկ Ուռնայր («Եւ որ ըստ կարգի կացին թագաւորք տանն Աղուանից՝ անուանք են այսոցիկ. Վաչագան քաջ, Վաչէ, Ուռնայր, Վաչագան, Միրհաւան, Սատոյ, Ասայ, Եսուաղէն, Վաչէ, ապա Բարեպաշտն Վաչագան»)[14]: Այս Ուռնայրին էլ սկզբնաղբյուրները (Փավստոսի ու Խորենացու երկերը) գիտեն միայն վերոհիշյալ ճակատամարտի առնչությամբ:

Դասխուրանցին, հենց սոսկ այս հիշատակություններից քաղելով Ուռնայր անունը (նա ուրիշ աղբյուր չունի, հակառակ դեպքում անպայման կվկայակոչեր), նրան է վերագրել Աղվանից աշխարհը լուսավորելու ծառայությունը:

Որ այսքանը առ ի չգոյե հորինված պատմություն է, ապացուցվում է վերը շարադրված տեղեկությունների մի այլ բնույթի անտրամաբանականությամբ: Այդ տեղեկությունների համաձայն, պետք է որ Ուռնայրի ձեռքով Աղվանքը լուսավորված լիներ, որպեսզի դրանից հետո Գրիգորիսն այնտեղ եպիսկոպոս ձեռնադրվեր: Սակայն, ինչպես հետո կտեսնենք, Գրիգորիսը եպիսկոպոս էր նշանակված Արցախում և այնտեղ իր գործն ավարտելուց հետո քարոզչության գնաց բուն Աղվանք ու այնտեղ էլ նահատակվեց նույն այդ բուն Աղվանքի թագավորի հրամանով[15]: Իսկ այդ թագավորի անունը ոչ թե Ուռնայր էր, այլ Սանեսան:

Սակայն այս մասին՝ քիչ հետո:

Մ. Դասխուրանցին, Ուռնայրի շուրջ հորինելով այս պատմությունը, չի նկատել նրա մանրամասների մեջ եղած նաև մի այլ հակասությունը. Գրիգորիսը եպիսկոպոս է նշանակվել Դ դարի սկզբին, իբր թե Ուռնայրի մահվանից հետո. «Ուռնայր արքայ Աղուանից... վախճանէ զմարդկային կեանս: Իսկ զկնի սորին մահուանն խնդրեցաւ յԱղուանից մանուկն Գրիգորիս ի կաթողիկոսութիւն իւրեանց...»[16]:

Գրիգորիսի Ամարասում նշանակվելը,

---

[10] **Կաղանկատուացի,** էջ 19:

[11] **Մովսէս Խորենացի,** Պատմութիւն Հայոց, Տըփղիս, 1913, էջ 304: Նույնը նաև՝ **Փաւստոս Բիւզանդ,** Դրվագ Ե, գլ. Դ:

Մանանդյանի կարծիքով ճակատամարտը տեղի է ունեցել ոչ թե Ձիրավի դաշտում, «այլ Բագրևանդ գավառի Բագավան ավանի մոտերքում՝ Նպատ լեռան հյուսիսակողմում, ինչպես այդ որոշակի վկայում են Ամմիանոսը և Փավստոսը» (**Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Ե, 1957, էջ 205):

[12] Մ. արքեպս. Օրմանյանը («Ազգապատում», § 71), չնկատելով այս շփոթը, գրել է, թե «Աղվանից Ուռնայրը, կերևի թե գերի ինկավ, որ Հայոց մայրաքաղաքի մեջ կը գտնվի» (Պապի դեմ կռվելուց հետո՞.—Բ Ու.), և իր երկիրը դառնալով «առաւել լուսաւորէ զԱղուանս» (կռվից 70 տարի առաջ.—Բ. Ու.):

[13] **Հր. Աճառյան,** Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Ե., 1948, էջ 204:

[14] «Պատմութիւն Աղուանից աշխարհի», գիրք Ա, գլ. ԺԵ:

[15] **Մ. Խորենացի,** էջ 259: **Փ. Բյուզանդ,** դպր. Գ, գլ. Զ:

[16] **Կաղանկատուացի,** էջ 21—22:

ըստ Մաղաքիա արքեպս. Օրմանյանի հաշվումների, եղել է ամենաուշը 320-ական թվականներին[17]: Սակայն, վերոհիշյալ աղբյուրների համաձայն, Ուռնայրը կենդանի էր դեռևս 370-ականներին և ճակատամարտ էր տալիս Հայոց զորքերի դեմ:

Այստեղ մենք անտես ենք առնում այն հանգամանքը, որ եթե Ուռնայրը նույնիսկ առնչություն ունեցած էլ լիներ բուն Աղվանքում քրիստոնեություն տարածելու գործին, ապա նա այդպիսի դեր չէր կարող խաղալ Ուտիքում ու Արցախում, այսինքն մարզպանական Աղվանքի աջափնյակում, քանի որ Դ դարում այդ երկրամասը Մեծ Հայքի նազմի մեջ էր գտնվում և նրա հետ էլ կարող էր ու պետք է ընդուներ նոր հավատը:

Բարեբախտաբար Հայաստանում քրիստոնեության տարածման հանգամանքները ներկայացնող մեր ամենաարժանահավատ աղբյուրը՝ Ագաթանգեղոսի Պատմությունը[18], հավաստում է հարցի այս կողմը պարզող մի շատ կարևոր մանրամասն:

Արշակունյաց միասնական թագավորության ժամանակներն էին, երկրի բոլոր տասնհինգ նահանգները՝ մեկ միապետի հովանու ներքո, միակամ ու համերաշխ: Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայում պետք է Հայոց քահանայապետ ձեռնադրվեր, և այդ սրբազան արարողության կատարելության համար Տրդատ թագավորի հրամանով հավաքում են «զգլխաւորս նախարարացն և զկուսակալս աշխարհացն», որոնց շարքում են՝ «առաջին՝ իշխանն Անգեղտան, երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է բդեաշխն մեծ... ութերորդ՝ իշխանն Գուգարացոց աշխարհին... մետասաներորդ՝ իշխանն Սիւնեաց աշխարհին, երկուտասաներորդ՝ իշխանն Ծաւդէից աշխարհին, երեքտասաներորդ՝ իշխանն Ուտիացոց աշխարհին...»[19]:

Մենք այստեղ նշեցինք պատմիչի ցանկի այն անունները, որոնք կարևոր են քննվող հարցի համար. Գուգարացոց, Սյունյաց, Ծավդեից (որ է՝ Արցախի)[20] և Ուտիացոց աշխարհների կուսակալ-նախարարները: Եվ ահա նրանք Մեծ Հայքի մնացած նահանգների տիրակալների հետ են, Արշակունի թագավորի հրամանով հրավիրվել են մեկտեղ:

Ապա պատմիչը շարունակում է. «Այս իշխանք են ընտիրք կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիւրաւորք ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ, զորս գումարեաց թագաւորն Տրդատ և առաքեաց զնոսա ի կողմանս Կապուտկացոց (կարդա՝ Կապադովկիացոց.—Բ. Ու.) ի քաղաքն Կեսարացոց, զոր ըստ հայերէն լեզուին Մաժաք կոչեն. զի տարեալ զԳրիգորն՝ քահանայապետ կացուցեն իւրեանց աշխարհին...»[21]:

Կատարվում է թագավորի հրամանը: Գրիգորը ձեռնադրվում է Հայոց քահանայապետ և «մեծաւ պատուով և թոթով և ժողովով զսուրբն Գրիգորիոս անդուստ յուղարկեցին իշխանքն հանդերձ»[22]: Հայաստան մտնելով, նոր հավատի առաջնորդը, «նախարարակոյտ զօրուն հանդերձ», իր երկար ճանապարհին ավերել է տալիս հեթանոսական կրոնի մեհյաններն ու բագիները, նրանց տեղերում հիմնում նոր հավատի սրբարաններ «եւ կացուցանէր քահանայս ի տեղիս-տեղիս»[23]:

(Շարունակելի)

---

[17] **Օրմանյան,** § 98:

[18] Հետազոտողների մանրակրկիտ քննությամբ վաղուց պարզված է, որ Ագաթանգեղոսի անունով մեզ հասած Պատմությունը, չնայած Ե դ. կեսին ավարտուն, վերջնական տեսքի բերված լինելուն, իր հիմքում ունեցել է Գրիգոր Լուսավորչի ու Տրդատի գործերին նվիրված մի ստեղծագործություն, որ եկել էր Դ դարից, դեպքերի անմիջական օրերից, ու գրված է եղել նույն այդ դեպքերի ժամանակակցի ձեռքով: Այս ստեղծագործության հավաստի տեղեկությունները, ի՛նչ խոսք, անխաթար պահպանվել են Ե դարի խմբագրության մեջ, որով և վերջինս ունի անառարկելի սկզբնաղբյուրի նշանակություն (Այս առթիվ հանգամանորեն տե՛ս **Մ. Աբեղյան,** Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Ե., 1944, էջ 157—162: **Հենրիկոս Գելզեր,** Փավստոս Բյուզանդ կամ հայկական եկեղեցվո սկզբնավորություն, Վենետիկ, 1896, էջ 16). «...իրավամբ Ագաթանգեղոսի այս մասն («Հայաստանի դարձին և այնուհետև պատահած դեպքերու մանրամասն տեղեկությունքը») կրնա իբր բացարձակ արժանահավատ աղբյուր համարվիլ»:

[19] **Ագաթանգեղոս,** էջ 403—404:

[20] Արցախի նախարարությունը, Ծաւդք-Ծոդք-Սոդք իշխանանիստ ավանի անունից, կոչվում էր նաև Ծաւդէից իշխանություն կամ նախարարություն (տե՛ս **Н. Адонц,** Армения в эпоху Юстиниана, СП, 1908, стр. 293—294.

[21] **Ագաթանգեղոս,** էջ 404:

[22] Անդ, էջ 409:

[23] Անդ, էջ 413: